ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 094-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.03.2024թ. թիվ 20 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 7,16012 հա (06-107-0501-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված) և 0,13715 հա (կադաստրային ծածկագիր՝ 06-107-0504-0002) արոտավայրերը, 5,96766 հա (06-108-0105-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 0,07084 հա (06-108-0123-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 4,51994 հա, 42,12175 հա (06-108-0124-0002 կադաստրային ծածկագրից առանձնացված), 6,54862 հա (06-108-0124-0003 կադաստրային ծածկագրից առանձնացված), 0,02794 հա, 0,13565 հա (06-108-0509-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 2,82259 հա (06-108-0510-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 0,04065 հա (06-108-0524-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված), 0,41587 հա (06-108-0577-0003 կադաստրային ծածկագրից առանձնացված) այլ հողատեսքերը և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0,28463 հա (06-107-0864-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված) այլ հողատեսք (դաշտամիջյան ճանապարհ) փոխադրել հատուկ նշանակության հողերի նպատակային նշանակության:

2. Սույն հողամասերի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ